ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N2289 - Ա **08 ապրիլի 2009թ.**

ՄՈՒՐԱՑԱՆԻ ՓՈՂՈՑԻ 2-ՐԴ ՆՐԲԱՆՑՔԻ Հ. 17 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԵՆՐԻԿ ՎԱՉԱԳԱՆԻ ԳՈՐԳՅԱՆԻ, ԼԱՈՒՐԱ ՎԱՉԱԳԱՆԻ ԳՈՐԳՅԱՆԻ, ԲԱԳՐԱՏ ՎԱՉԱԳԱՆԻ ԳՈՐԳՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Հենրիկ Վաչագանի Գորգյանի (ծնված 26.03.1938թ.), Լաուրա Վաչագանի Գորգյանի (ծնված 28.02.1948թ.), Բագրատ Վաչագանի Գորգյանի (ծնված 22.06.1956թ.) դիմումը: Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Մուրացանի փողոցի 2-րդ նրբանցքի հ.17 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 601.7քմ, որից 507քմ մակերեսով հողամասը Հենրիկ Վաչագանի Գորգյանին, Լաուրա Վաչագանի Գորգյանն, Բագրատ Վաչագանի Գորգյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն է: Օրինական հողամասին կից օգտագործվող 52.86քմ մակերեսով հողամասը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով, մնացած 41.84քմ մակերեսով ցանցով ցանկապատված հողամասը չի կարող տրամադրվել, քանի որ գտնվում է կառուցապատման գծից դուրս:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 1997 թվականը, 20.10.2005թ. ժառանգության իրավունքի վկայագիրը, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի էրեբունի տարածքային ստորաբաժանման 02.12.2008թ. հ.3-8131, Երևանի քաղաքապետարանի <<Հողի ունեցվածքի գործառնություններ>> ՊՓԲԸ-ի 18.03.2009թ. հ.20/2-Ե/136 գրությունները, Երևանի քաղաքապետարանի <Քաղաքաշինություն>> ՊՓԲԸ-ի 10.03.2009թ. հ.20-Ել-1655 եզրակացությունը, համաձայն որի Մուրացանի փողոցի 2-րդ նրբանցքի հ.17 բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով <<Երևան քաղաքում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> հ.2387-Ն որոշմամբ.

1. Վերականգնել Մուրացանի փողոցի 2-րդ նրբանցքի հ.17 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Հենրիկ Վաչագանի Գորգյանի, Լաուրա Վաչագանի Գորգյանի,

Բագրատ Վաչագանի Գորգյանի հողօգտագործման իրավունքը բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 507քմ մակերեսով հողամասին կից 52.86քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 52.86քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ։

2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի էրեբունի տարածքային ստորաբաժանման կողմից։

3. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված միասնական գլխավոր հատակագծով։

4.Մուրացանի փողոցի 2-րդ նրբանցքի հ.17 հասցեի բնակելի տանը տրամադրել հասցե՝ <<Մուրացանի փողոցի 2-րդ նրբանցքի հ.17 տուն>>։

5. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի էրեբունի տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Հենրիկ Վաչագանի Գորգյանի, Լաուրա Վաչագանի Գորգյանի, Բագրատ Վաչագանի Գորգյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները։

6. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝ սույն որոշման օրինակները 5-օրյա ժամկետում առաքել էրեբունի թաղապետարան։

7. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա։

8. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Սարգսյանի վրա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ